МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No._____

«10» Դեկտեմբեր 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳՍԻ» Ա/Ձ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար «Սարքավորումների և պահեստամասերի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/06» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի արդյունքում 1-3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված «ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳՍԻ» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Մասնակից) հետ 2023 թվականի հունիսի 08-ին կնքվել է «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/06»-1 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 1-ով (տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց) 3-րդ չափաբաժնի համար ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90 օրացուցային օր (06 սեպտեմբերի 2023 թվական), սակայն մինչ օրս 3-րդ չափաբաժնի մասով ապրանքները Մասնակցի կողմից չեն մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները (մասնավորապես 2.1.7 կետի «բ» պարբերությունը) Պատվիրատուն միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը 2024 թվականի ապրիլի 30-ին հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով Պայմանագրի դրույթներով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, որոշեցի՝

1. «ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳՍԻ» Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը/	Գործու նեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման, ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳՍԻ» Ա/Ձ	47980417	Արարատի մարզ, ք. Մասիս, Նոր թաղամաս, 12 շենք, բն. 25		V		Որոշման ամսաթիվը՝ 10.05.2024թ., Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/06»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում լիազորված մարմնին և Մասնակցին տրամադրելու օրվանից:

3. Որոշումը կայացվելու հաջորդող օրն այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ «ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳՍԻ» Ա/Ձ-ին:

Ստորև ներկայացնում եմ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու փաստը հավաստող տեղեկատվությունը.

Հարգանքով՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ

Կատարող՝ գնումների և մատակարարման բաժնի
գլխավոր մասնագետ Մելինե Սողոյան հեռ. 060 38-00-40, 077 19-80-99